

# ՄՐՐԿԻ ՍՈՒԲԸԼ

## I

Առաւօտ էր. Գայլատուայ լճակը գեռ չէր ապատուել վազորդեան մշուշից, որ մի փոքր բարձրացած ջրի մակերևոյթից, թափանցիկ ամպի պէս հանդարտ կանգնել էր վերեռւմ; կարծես դժուարութեամբ էր բաժանեռւմ իր յեղյեղուտ անկողնից, ուր անց էր կացրել գիշերը լճակի գրկում։ Գարնանային առաւօտեան շողերով ողոզուած վճիտ լճակը գրաւիչ նազանքով ծփծփում էր հանդարտ, ծոյլծոյլ շոյում էր իր կանաչազարդ ափերը, նման քնից նոր արթնցած գեղեցկուհու, որ կիսամերկ պառկած՝ ձգձգւում, յօրանջում է մեղմիւ և պշրանչքով ցնցում, փոռում է իր հարուստ վարսերը։ Թեթե զեփիւն անցնում էր ջրի մակերևոյթով, ալեակները իրար էին դիպչում և միենոյն անկողնում կողք կողքի պառկած շարածնի մանուկների պէս ասես քչփչում էին իրար ականջում, բաներ պատմում և ապա միահամուռ քրքչոց բարձրացնում։ Ալեակների շարժումից ջրերի մակերևոյթի վրայ անթիւ, մանր պսպղուն օղակներ էին կազմում, որոնք փրփրուն կնճիռների պէս փայլվիլում էին և խաղում արեի գրաւիչ շողերի երեսին։

Սպիտակ ձկնկուլները, վայրենի մեծ ու փոքր բարերը և այլ ջրային թռչունների մեծ բազմութիւն եւ բամներով խաղում էին ջրերի վրայ, յուզում ալիքները,

իրանց առաւօտեան որսը կատարում, սուր ճիշերով  
խնդակցութիւն յայտնելով ծագող արեին, կարմրախայտ  
ձկները բազմաթիւ վտառներով խաղում էին ափերի  
մօտ, երբեմն երբեմն իրանց վարդադոյն թերերը  
ցոյց տալով արեին կամ նրանցից մէկն ու մէկը ցատ-  
կում էր վեր ջրի մակերեսովթից, կարծես ձկնկուների  
ճաշակը գրգռելու համար մի վայրկեան պսպղում,  
ոսկեզօծում էր արեի շողերի առաջ, ապա նորէն ծած-  
կում ջրերի վճիռ ծոցում:

Լճի կենարոնում մշուշի միջից ուեին էր տալիս կըդ-  
զին, մութ ու անձև զանդուած, որ կարծես լողում էր  
ջրերի մէջ, իսկ նրա դէմ ու դէմը, ցամաքի մի կտոր,  
երկարացած բազուկի պէս ձգուած մինչև լճի խորքը,  
կարծես աշխատում էր բռնել, գուրս քաշել ջրերի մէջ  
մնացած իր եղբօրը՝ կղզին, բայց ալիքները չէին թող-  
նում, նրանք յուզուում ու խաղում էին երկսի մէջ, ասես  
հեղնելով նրանց անօգուտ ճիգերը։ Հեռու արեելքում  
Մասիսը սպիտակափառ գլուխը բարձրացրած՝ իր չորս  
կողմի բլուրների և սարերի կատարների վրայից ասես  
աշխատում էր լճակին նայել, իր պատկերը տեսնել նրա  
վճիռ ջրերում, բայց իր անզօրութեան մէջ գլուխը քաշ  
էր ձգել, մույլուել ինչպէս մի վշտացած ծեր իշխան,  
որ առաջին անդամն է զգում զօրութեան թուլանալը։  
Բարդողեան լեռներն իրանց ալեոր մօր փէշերից բըռ-  
նած մանուկների պէս իրար հրհրելով ձգւում, գալիս  
էին հիւսիսից. նրանց առաջապահները՝ Սինակայ սարե-  
րը արդէն գրաւել էին լճակի հիւսիսային ափերը և  
ոտները կախած ջրերի մէջ կարծես գոհութեամբ ժըպ-  
տում էին իրանց այս յաջողութեան համար և շարաճճի  
կերպով ալիքների հետ խաղալով հեղնում էին յետ  
մնացած ընկերներին։ Աւելի հեռու հարաւում՝ Ռուկաւէտ  
ու Զրաբաշխ լեռները տիրութեամբ գիտում էին լիճն  
ու իր շրջակայքը և կարծես դժգոհ էին որ իրանց քոյ-  
րերի պէս չեն կարող գրկել, գուրգուրել այդ յեղյե-  
ղուկ գեղեցկուհուն, որի գալար մարմինը աղեղի պէս

կորացած, փարել էր շրջապատի լեռներին, կանաչազարդ ափերի մէջ նազելով հեռւմ էր մերթ մէկին, մերթ միւս մին ժամանակ էր գողազարդ ու ծաղկաւէտ մարդագետիններից բարձրացող նուրը անուշահոտութեամբ, ողջ շրջակայքը կարծես բուրմունք էր արտաշնչում: Այդ ժամին գեղեցիկ էր և՛ ծովակը և՛ Մասիսի թիկոննքից բարձրացող արեւը և՛ ծաղկազարդ լեռներն ու ձորերը իրանց վաղորդեան մշուշով, որ նուրը քողի պէս թափանցիկ ծալքերով սքօղում էր ամեն ինչ:

Թրուայ այդ ժամին Արեգին գիւղից մի երիտասարդ գուրս եկաւ և հանդարտ քայլում էր գաշտերով դէպի լճակը: Նա բարձրահասակ էր և գեղատեսիլ, գլխարկը ճակատի վրայ իջեցրած, շուրջը չէր նայում: գնում էր գլխակոր, խիստ մտազեաղ կերպարանքով: Նա հասաւ լճին, անցաւ դէպի թերակղզին, առաջ անցաւ մինչև ծայրը, բարձրացաւ աւերակ վանքի քարերի վրայ և հայեացքն ուղեց դէպի հեռու, դէպի շրջապատի լեռները Յետոյ նրան դրաւեցին զոյդ հաւալուսներ, որոնք փառահեղօրէն լողում էին կապոյտ ջրերի վրայ իրար դուրգուրելով քնքոյշ հապումով:

—Երանի՞ ձեզ, մրմնջացին նրա շրթունքները:

Թուշունները մի վայրկեան նայեցին այս մարդուն, նա անշարժ նստած էր, ուստի շարունակեցին իրանց որսը: Նրանց բաց վարդադոյն փետուրները փայլվում էին արեւի շողերի տակ և իրանց ցցունքազարդ գլուխներն անդադար ներս էին թաղում ջրերի մէջ, տափակ լայն կոտով բռնում էին ձկները, ապա բարձրացնում դէպի վեր իրանց պարանոյը, պահում ուղղահայեաց, ձուկն ընկնում էր կոկորդի տակի լայն, գեղանաւուն պարկի մէջ, և կրկին թաղում էին գլուխները ջրերի մէջ: Նրանցից հեռու բաղերի երամները օրօր ուում էին ալիքների վրայ կամ իսպառ կորչում էին ջրերի տակ, մի այլ տեղում խմբով յայտնուելու համար:

Երիտասարդը շարունակում էր նայել, և կարծես ձանձրացած այս բոլորից, նստած տեղում երեսի վրայ

ընկաւ և նայում էր հէնց իր առաջը ծփծփացող ալիքներին, ուր ձկներն ահագին բազմութեամբ հաւաքուած՝ իրար սղմում, հրհրում էին քարերի մօտ, երիտասարդը մի խիճ առաւ, ձգեց նրանց վտառի մէջ, կենդամիները ցրիւ եկան և կորան ջրի խորքում:

—Դուք էլ ձանձրալի էք, գնացէք, դարձեալ մըրմընջաց երիտասարդը:

Արեւ բարձրացաւ, մշուշը վերացաւ, առաւօտեան հովի խոպառ դադարեց, փոքրիկ ալեակներն էլ խաղաղուեցին. լճի մակերեսոյթը հարթ հաւասար ապակու պէս այժմ պսպղում էր ակնախտիղ փայլով, արեկ շողերն ասես էլ չին ներս թափանցում, այլ անդրադառնում էին և բեկրեկում մթնոլորդի մէջ ոսկեգոյն խուրձերով:

Երիտասարդը նայում էր և չը կարողացաւ նկատել, թէ ինչպէս մի տարիքաւոր կին, որ գիւղից նոյն ժամին գուրս գալով քայլ առ քայլ հետեւել էր նրան, հասել էր նոյն թերակղզուն, անցել է հինաւուրց վանքի աւերակներից և այժմ մի փոքր հեռու կանգնած՝ ուշի ուշով հետեւում էր նրան, նայում էր նրա շարժումներին ծայրայեղ զգուշութեամբ։ Կինը երեկ արտասում էր, նա բարձրացրեց առաջի գոգնոցը աչքերը սրբելու, այդ շարժումը խրանեցրեց հաւալուսներին, նրանք մի անախորժնին արձակելով իրանց լայն թերը զարկեցին ջրի մակերեսոյթին, մի քանի անդամ թափ առան և բարձրացան օդի մէջ։ Նրանց հանած աղմուկից վախեցած նաև բագերն իրար անցան, կռկռացին, ձկնկռուներն էլ միւս կողմից խառնուեցին, ճշացին և ամենքը, կարծես խօսք մէկ արած, թռան դէպի Բայազէտի շամբուաները։

Երիտասարդը ցնցուեց, գլուխը բարձրացրեց, շուրջ նայեց և տեսաւ տարիքաւոր կնոջը և ոտքի կանգնած լուռ նայում էր մոայլ, վշտոտ հայեացքով.

—Ասծ, քի մեռնեմ, զնւակս, դառնուկս, ինչ է պատահէլ, եղները գոմում մնացին, արօրը դրանը, ինչո՞ւ ես մօրդ ողջ ողջ թաղում, քեզ ինչ է եղել, երեսիդ նայեցի, սգաւոր բալա, և յետեիցդ ընկած եկայ,

Երիտասարդը շարունակում էր նայել մօրը միենոյն ցաւոտ հայեացքով, ապա առաջացաւ դէպի նա, ձեռքն ուսին դրեց. մայրն արցունքոտ աղաչական աչքերը նրան դարձրեց.

—Տուն գնա մայրիկ, ես կը դամ, կը դամ, ասաց Ասօն և հեռացաւ գնաց դէպի հեռաւոր ափերը, հեռաւոր լեռները:

Մայրը կանգնած՝ նայում էր նրա յետեից երկար ժամանակ, երբ որդին ծածկուեց, գոգնոցով աչքերը սրբեց, մոտաւ աւերակ եկեղեցին, ծունկ չոքեց մամուապատ քարերի վրայ և աղօթում էր, աղօթում իր որդու համար, որ չարից ազատ մնայ:

Ճաշ էր արգէն, երբ նա աղօթքը վերջացրեց և երերալով ու վշշալով տուն դարձաւ ջարդուած:

## II

Ա... գիւղում ոչ ոք չիմացաւ, թէ ինչո՞ւ յանկարծ սուս կացաւ Ասօն: Գիւղի ամենից սիրուն, ամենից սըրտոտ, ամենից ուրախ այդ աղամարդը, աղջիկների սիրոյ, երազների դողտրիկ առարկան, «Զանգիւլիւմի» վիճակախաղի մշտական հերոսը յանկարծ մոայլուեց ու լուեց: Ասօն մնջեց՝ ինչպէս կարկաչիւն աղբիւրը խեղտուած երաշտից, ինչպէս սաղարդում երգող փոքրիկ թըռչչունը, որ ամպերի տակ յանկարծ նշմարում է բազէի ստուերը: Այնպէս լուեց Ասօն:

Նա տիսուր էր, նա դարդ ունէր: Յաւեր կան, որ հսկայ սարն էլ տանել չի կարող, ջահիլ դալար սիրուն ինչ անի, երբ հոգին մումուռ է լալիս ու կրծքի տակ փոթորիկ կայ՝ ձեռքն ինչո՞ւ դործի, ինչպէս դործ: Գիշերն ամբողջ Ասօն անկողնում իր բարձը ճմռեց, կուծքը չանգուեց, շրթունքները կծոտեց, մրմնջաց, անքաց, լուսաբացին վերկացաւ, թողեց եղներն ու արօր, պատից կախած թողեց կաշուէ խարազանն և հաստ քզանը, վըշ-

առա հայեացը ձգեց այդ բոլորի վրայ և լուս դուրս  
եկաւ դռնից, Մայրը հասկացաւ, որ որդին մեծ ցաւ ու-  
նի, ողջ գիշերը հետեւել էր նրա տնքոցին:

—Ասօ, որդի, վար ու ցանքը, արան ու արօր, ցաւդ-  
ինչ է որդի ջան, հիւմնդ ես:

—Զեմ կարող մայրիկ, աշխատանքը ձեռքիցս վայր  
է ընկնում: Եւ նա դուրս գնաց, բայց մայրն ինչպէս համ-  
բերէր. դուրս եկաւ յետեից ու քայլեց կամացուկ, իմա-  
նալու համար թէ ուր է գնում որդին: Ասօն վանքի ա-  
ւերակներում մօրը ճանապարհ գրեց և ինքը անորոշ  
մոլար հայեացքով գնաց թափառելու դաշտերի և ձու-  
րերի խուլ հեռաւորութեան մէջ: Եւ մայրը՝ խեղճ նու-  
նուֆարը, ցաւած սրտով տուն եկաւ, նայեց սրահում,  
աչքերը յառեց գրանը, մինչև երեկոյ որդուն էր սպա-  
սում, իսկ նա չը կար ու չը կար. ասաց կը դամ, մայրը  
հաւատաց, բայց չեկաւ: Եւ նունուֆարը նստած մուա-  
ծում է հազար ու մի սկ բաներ և անցեալից շատ յու-  
շեր ու պատկերներ մէկիկ մէկիկ եկան ներկայացան  
նրա աչքին. նրանք ամենքն էլ խօսում են իր տնից, իր  
օջաղից և շարքն այնքան երկար է, որ հասնում է մին-  
չև իր ամուսնութեան առաջին տարիները, մինչև իր  
հարանութիւնը: Ի՞նչ օրեր էին:

Լաւ է յիշում նունուֆարը. նա նոր ամուսնացել է  
Մուրագի հետ. օջաղը չէն է, բաղդը ժամում է, նա  
ջահիլ, սիրուն կին է, ցանք ու արտ ունին, լուծ ու եղ  
ունին: Յետոյ վրայ են հասնում նոր աւելի երջանիկ օրեր,  
նունուֆարը մայր է, երկու գողարիկ երեխաների մայր,  
նախ ծնուեց Գրքն, երկու տարի յետոյ աշխարհ եկաւ  
Ասօն, իր թառլան Ասօն: Մեծացան, հօրը թե ու թիւ-  
կունք դարձան: Ա՛հ, երբ երեկոները իր զոյդ զաւակ-  
ները զոյդ արծիւների պէս եզների մէջքին թառած դաշ-  
տից առւն էին դալիս, երբ նրանց ձայնը հնչւում էր  
դրան առաջ, ի՞նչ էին զդում հայրն ու մայրը: Լաւ էր  
է՛ շէն, պայծառ օջաղ, ժբաջան գլխաւորը՝ բարի աշ-  
խատաւոր ամուսինը կենդանի, որդիներն՝ աննման: Հե-

ոռւ են այդ բոլորը, երազի պէս են դալիս անցնում  
նրա աչքի առաջով:

Յիշում է ինչպէս հիմա. Նունուֆարն Ասօին էր շատ  
սիրում, հայրը՝ Գրքօին. Մեծն աւելի աշխատասէր, հօրն  
աւելի հնազանդ էր, իսկ Ասօն, դէ նա ուրիշ բան էր:  
Նա կարծես արծւի ճուտ լինէր, կարծես այս աշխարհ-  
ում, այս երկնքի տակ, սեւառը, ցաւոս գիւղում ծնուած  
չը լինէր, նա գեղեցիկ էր և սիրում էր, որ ամեն բան  
լաւ, գեղեցիկ, գրաւիչ լինի, որ աշխարհում գէշ բան  
չը լինի. Ա՛խ նրա գլխարկը, այն միշտ թեք դրած դըլ-  
խարկը, որ այնպէս սազում էր նրա լայն երեսին, մազի  
այն փունջը, սիրուն գալարուն փունջը, որ կախուած էր  
ճակատի վրայ աջ կողմից:

Փոքր ժամանակ՝ նունուֆարը լաւ յիշում է, նա  
Ասօին տանում էր հետը գաշա, երբ ինքը գնում էր  
բանջար քաղելու: Ասօն հեռանում էր խմբից ծածկում  
խոտերի մէջ և յետոյ վերադառնում ուրախ ուրախ կան-  
չելով մի հազուագիւտ ծաղիկ ձեռքին բերում էր մօրը  
ցոյց տալիս:

—Տես, տես մայրիկ, որքան գեղեցիկ է, ծմակում  
գտայ, բարձր տեղ էր էէ հեռուից տեսայ, չանգուելով  
բարձրացայ և քաղեցի, էլի կերթամ. թէ գտնեմ, կը  
բերեմ: Եւ երեխան կարմրած, հեալով նորէն վազում  
էր ծածկում խոտերի մէջ, նոր ծաղիկներ հաւաքում,  
և դարձեալ ճշարով, ուրախ ուրախ մօրը բերում: Իսկ  
թիթեռները, ախ նա որքան էր սիրում, ինչպէս էր ընկ-  
նում նրանց յետեից, մանաւանդ՝ երբ թեերը գոյնզգոյն  
էին ու նախշուն: Քանի քանի անդամ լաց է եղել, երբ  
երկար չարչարուելուց յետոյ չի կարողացել բռնել ցան-  
կացած սիրուն թիթեռը:

Հապա ամպերը... Ասօի մշտական սիրոյ, հիացմուն-  
քի այդ առարկաները: Մայրը քաղհան է անում, իսկ  
փոքրիկ Ասօն պառկել է խոտերի մէջ, ձեռքերը գլխի  
տակ դրած անյագ նայում է դէպի երկինք, ուշադիր,  
բորբոքուած աչքերով, ամպերի խաղին է հետեւում, նը-

բանց զանաղան ձեւերը դիտում։ Այդ երկնային խաղը յափշտակում է նրա մանկական ոգին, Ասօն տեսնում է նրանց ցրիւ գալը պատառ-պատառ, տեսնում է նրանց պարը, պատոյաները, հետեւում է նրանցից իւրաքանչիւրի ամենավնքոյշ, ամենանուրը գալարներին, երաղում է կարծես և ապա վազում է մօր մօտ։

—Մայրիկ, մայրիկ, տես՝ այն ամպը, որքան սիրուն է, տես նա գնում է դէպի Մասիս, մայրիկ ինչու բոլոր ամպերը դէպի Մասիս են գնում։

Խեղճ մայրը չի հասկանում, թէ իր փոքրիկն ինչ է դտել ամպերի մէջ, բայց անորոշ կերպով զգում է, որ դա լու բան է, ապա բռնում է իր զաւակի սիրուն դլուխը և խանդաղատանքով սղմում է իր բազուկների մէջ, սղմում է մայրական տաք, սիրալիր կրծքին։

—Ա՛խ, արծիւ բալա։

Նունուֆարն ինչպէս մոռանայ, մի օր, ախ, հազար երանի էր էն օրին, Ասօն հազիւ տաս-տամներկու տարեկան եղները տարել էր արածացնելու լճի ափերին, ինքը նստել էր մի քարի վրայ, աչքերը յառել ջրերին ամբողջ ժամերով, իսկ եղները ազատ, արծակ ձգուած՝ մուել, տրորել էին հարեւան Յուսօնի արտը։ Դեռ ճաշ չեղած՝ մէկ էլ տեսաւ Յուսօն ինքը եղներն առաջն արած եկաւ գոռդոռալով, իսկ նրա յետեկից գալիս էր Ասօն դլուխը քաշ և այտերն ուռեցրած, սիրալ լցուած։ Հայրը՝ Մուրագը, զայրացած որդու այս անհոգութեան համար յանդիմանել սկսեց.

—Սիր ինչու ես թողել եղները հարեւանի արտը արորեն։

Երեխան լուռ էր, գլուխը քաշ ձգած։

—Զէ քեզ եմ հարցնում, կրկնեց հայրն աւելի զայրացած նրա յամառ լուռթեամբ։

—Ես... ես... լճին էի նայում... ձկները խաղում էին... էլ չեմ անի, ասաց երեխան հեկեկաց և գլուխը ձածկեց մօր փէշերի մէջ։

Հարեւանը ժպատաց, գոհ այդ բացատրութեամբ,

Հայրն աւելի խոժոռուեց երեխայի այս տարօրինակ պատասխանի վրայ, նա զայրացաւ, որ որդին դաշտ է գընում փոխանակ եղներին հսկելու, նատում, նայում է, թէ ձկներն ինչպէս են խաղում, ալիքներն ինչպէս են իրար հրհում, բայց մայրը... դէ ի՞նչ անէր, իր տղան այնպէս էր, սիրուն էր ու սիրուն բանով գրաւեռում էր. նա գրկեց իր արտասուող զաւակին, համբուրեց թաց աչքերը.

— Օօ, թառլնն բալա, քեզանից ի՞նչ պիտի դուրս գայ:

Տարիներ անցան Գրքօն և Ասօն հասած տղամարդիկ դարձան: Հայրն ասում էր, թէ երկսին մի անդամից պիտի պսակել և մի օրում հարսանիք անել: Գրքօին նշան գրին, բայց Ասօն ոչ ոքի չհաւանեց, սիրուն չեն, ասում էր: Հայրը փորձեց ստիպել իր ուզած աղջկայ հետ նշանել. Խղուր, Ասօն բացէ ի բաց մերժեց: Ճարչը կար, պէտք էր Գրքօին հարսանիք անել Գիւլնազի Շողերի հետ: Ցայց բացդն այլ կերպ էր տնօրինել. Հարսանիքից մի քանի շաբաթ առաջ Գրքօն մի քանի ընկերներով Բայազէտի շամբուտների մէջ կինճ որսալու էր գնացել, նոյն երեկոյեան ընկերները նրա անկենդան դին բերին տուն. կատաղի կինճը գնդակից ազատուած, իր փախստի ժամանակ, ժամնիքով հարուածել էր Գրքօին և փորը պատռել և տեղն ու տեղը մահացրել: Ի՞նչ, Տէր Աստուած. Խեղճ ծնողների գլխին ասես երկնքից քար ընկաւ. բաղդի առաջին հարուածները այդ Մուշադի ընտանիքին. բայց ի՞նչ հարուած. ով կարող էր տանել: Մուրադը նրանից յետոյ երկար չապրեց և նուռֆարը մնաց իր մի հատիկ Ասօի և իր տասն տարեկան աղջկայ նուշիկի հետ: Ցաւը մեծ էր, բայց էլի, դէ Ասօն մենակ մի ընտանիք արժէր, նա մենակ մի ամբողջ տուն կը լցնէր, մայրն իր ցաւն Աստծուն յանձնեց և չը տրանջաց: Ասօին աղերսեց, որ իր մեռած եղբօր նշանածը չը թողնի իր հօր օջախից դուրս դնայ. Գրքօին բաժին չեղաւ, թող ինքն առնիւ: Ասօն մի փոքր մտածեց մօր առաջարկութեան վրայ և համաձայնեց:

Ելի լաւ էր, Նունուֆարը Ասօի պէս հասած ու նշանուած որդի ունէր, փոքրիկ Շուշիկն ունէր, այսքան նով էլ գոհ էր Աստուծուց. բազզն ումն է միշտ ժպտացել, ով ցաւեր, սեեր չի տեսել, ով է այս փուչ աշխարհում կատարեալ երջանիկը Բայց այժմ այս ինչ է պատահում, բազզն այսքանն էլ շատ է համարում: Ի՞նչ ոնի Ասօն, որ այս քանի օր է մռայլուել է ու սգուորել: Նունուֆարը հեկեկաց, գոգնոցը դէպի աչքերը տարաւ: Դուռը ճոճռալով բացուեց, ներս եկաւ մի փոքրիկ աղջիկ. Շուշիկն էր, գաշտից էր դալիս և փոքրիկ գոգնոցի մէջ բանջար էր բերում:

—Մայրիկ, Ասօնն տեսայ, վազեցի հասայ, վրաս քնայեց, թողեց գնաց, մայրիկ չորս կողմից ինձ ասացին, թէ եղբայրդ քեզ չի սիրում:

—Օճֆ Շուշիկ ջան, բոլորը գնացին, բոլորը թողին ինձ սգաւոր ու անտէր, մէկ դու մնացիր, բալաս, քս սգաւոր մօրը միխթարելու: Նունուֆարը դրկեց փոքրիկ աղջկան, որ նայում էր արտասուող մօրը և չէր հառկանում, թէ ինչ կայ, ինչո՞ւ է արտասում: ապա ինքն էլ սկսեց լոր:

—Մայրիկ, երբ կը դայ Ասօն. ես նրա համար այսօր այնքան սիբեզ ու զոխ եմ բերել:

—Կը դայ, կը դայ աղջիկս. Աստուծ ողորմած է, կը դայ:

Երեկոյ էր, արել թեքուեց դէպի հորիզոնը, մայրն սպասում էր, Ասօն չը կար և չը կար:

Դաշտը դատարկուեց, մարդիկ յետ եկան, մառախուզն իջաւ, բայց Ասօն չը կար դեռ, մայրն ինքը հոգաց եզները, կերակուր տուեց, գոմը մաքրեց և նստեց էլի սպասեց: Շուշիկի հետ կծկուած սրահի թմբի վրայ նա աչքերը յառել էր բակի դրանը: Վերջապէս ոտնաձայն լուսեց, մայրը վեր կացաւ ընդ առաջ վագեց: Ասօն էր... դարձեալ տիսուր, դարձեալ մռայլուած: Մեծ, սիրուն աչքերի վրայ թախիծը ծով էր կապել, դեղեցիկ, առնացի ճակատի վրայ կնճիռները կախուել էին ինչպէս

մութ ամպեր։ Մայրը վախեցած՝ նպյում էր և կարծես  
էլ չէր ճանաչում իր զաւակին. այնքան փոխուել, մաշ-  
ուել էր նա այս կարծ ժամանակում։

—Ասօ, քե մեռնեմ, ի՞նչ ունես։

—Դարդ ունեմ մայրիկ, դարդ ծովի չափ։

—Ճարդ տանեմ Ասօ, որդի, ծով դարդդ ինձ տուր,  
ախ, ջահէլ ջիւան քո արևին թող մութ ամպը հով չանի,  
դալար կեանքիդ հոտոտ ծաղկին թող ցուրտ հովը լը  
դիպչի։

—Զէ, քեզ չեմ տայ դարդս մայրիկ, մի քիչ կը  
տամ սարին-քարին, մի քիչ կը տամ սև ժայռերին, գիծ  
գետակին աղերս կանեմ, մի քիչ էլ նա հետը տանի,  
թէ ծով դարդիցս էլի մնայ, էն էլ սրտումն խոր կը  
թաղեմ; որ աշխարհում մարդ չիմանայ, դարդս մեծ է,  
մայրիկ շատ մեծ, թէ որ յանկարծ «խալին» իմանայ...  
ախ չեմ կարող, դարդը լաւ է քանց ամօթը։

—Հէյրան լինիմ քեզ Ասօ ջան, թող աշխարհում  
մարդ չիմանայ, դարդդ մենակ խեղճ մօրդ տուր, շատ  
չեմ պահի լոյս աշխարհում, չոր գլխիս հետ շուտ կը  
թաղեմ հողի տակ, մի մեծ ծանր քար էլ վրաս քաշիր,  
ես ու դարդդ ջուխտ քրոջ պէս լուռ կը քննենք փոսի  
մէջ, էլ աշխարհում մարդ չիմանայ, դարդդ մենակ խեղճ  
մօրդ տուր։

—Զէ, չէ, մայրիկ, դուն էլ խեղճ ես, սարերն են  
մեծ, ձորերն են լայն ու խորունկ, մեր գիծ գետն էլ  
գիտես իսո որքան ուժեղ է, թող որ այնտեղ թաղեմ  
դարդս. քամիների հետ կը վաղեմ ձորերում, փոթորկի  
հետ ժայռերի կատարներին կոռնամ, գիծ գետակի  
մոնչիւնի հետ ես ցաւիս երդը կասեմ և ամեն տեղ  
պատառ-պատառ ես ծով դարդս կը փռեմ, թող իմ  
մայրը չը տանջուի սրտիս խոր-խոր ցաւերով։ Հանդիստ  
մայրիկ, թող ինձ հանգիստ դարդիս հետ։

—Ախ, քե մեռնեմ, էզ ի՞նչ դարդ է, ի՞նչ ամօթ,  
Ասօ ջան, որ սեւոր մէրդ էլ պէտք է չիմանայ։ Օ՛ֆ,  
օ՛ֆ, Աստուած, մէջք եմ կոտրել, ծամ սիպտակել, որ

աևն իմ զաւկից հեռու մնայ, օջաղի ծիլ ծաղիկը չը թոռա-  
մի, ինչ ես անում կապուտուր Տէրք Ասօ, Ասօ, մեղք է  
մէրդ, կամ ցաւդ տուր, կամ գերեղման, դաշտ ու ձու-  
րերն ինչ ես թափառում:

—Դաշտն ինձ կը փրկի, մայրիկ, դարդս եմ ցանում  
ձորերովը մէկ, ախ, սարեր-ձորեր, ջան ձորեր, ողորմած  
ձորեր. այնտեղ բաց է մայրիկ, շատ բաց ու արձակ.  
լիք-լիք կը ձքով շունչ եմ առնում և քամիների թևերի  
վրայ վաղվզում, բաց ճակատս այրուած կուրծքս ծովին  
եմ տալիս, այնպէս լաւ է, այնպէս հանդիստ, այնտեղ  
այնքան բան եմ մնուանում, իսկ ինչքան շատ բան է  
պէտք ինձ մոռանալ:

Նունուֆարի ջուխու աչքերից ջուխու կաթիլներ կա-  
խուցին և չորացած պառաւ այտերն ակօսեցին վերից  
վար. բայց մայրական տաք արցունքը չը կարողացաւ  
մարել զաւակի սրտի կրակը Սիրող մայրը տանջուած  
սրդու սրտի դարդը չիմացաւ: Զահիլ-ջիւան սրտի ցաւը  
Ա.... գիւղն էլ չիմացաւ:

Ասօն դարդ ունէր, դարդ ծովի չափ:

### III

Գիւղը գաղանիք չի սիրում, մութ բանից վախե-  
նում է: Գիշերը երբ սկ խաւարն իջնում է պատում  
արար-աշխարհ, երբ աչքն ու գլուխը էլ չեն հաշտում  
երար հետ, այնքան բաներ կան դիւզում, դաշտերում,  
սարերում, որոնք ցերեկը ոչինչ են, նոյն իսկ սիրուն  
գրաւիչ բաներ են, մթնում գառնում են սարսափերի:  
Մենաւոր ծառը թևեր ու գլուխ է ստանում և բռունքը  
է ցոյց տախս ուշացած ճամբորգին, սարի կատարին  
չար աչքեր են պլազում, ժայռը գալարւում է, օրօրւում,  
մացառները հաջում են, թմբերը՝ տնկում, փոսերը՝ հե-  
ռում, տերեները փոփում են չար բաներ, առուներն օձե-  
րի պէս քսում են. վիշապները բազմանում, դեերը լրց-

նում են շրջակայքը և ողջ բնութիւնը դառնում է հազար բերանով, հազար աչքերով, հազար ճիրաններով մի հրեշ, որ խեղտել լափել է ուզում ուշացած ճամբորդին:

Գիւղը մութ բան չի սիրում, գաղտնիքն էլ մութ գիշեր է, հօգի է հանում, փոյթ չէ նոյն իսկ, թէ դա մի հատիկ սրտում թաղուած ծածուկ վիշտ է: Ինչ կարիք կայ գաղտնիքի, թող ամեն բան պարզ, աշկարայ լինի, արեկ պէս պայծառ, սրտերի խորքի խաւարն էլ լաւ չի: Արեգինը տեսաւ Ասօնն, ուշի ուշով նայեց նրա ճակատի կնճիռներին, նրա աչքերի մէջ փայլող վշտին, տեսաւ այդ տանջուած գէմքը, այդ ծանր թափիծը և ինքը գիւղն էլ յօնքերը կախեց, աչքերը մոայլեց, երեկ Ասօն մի խորհրդաւոր բան ունէր, մի ծածուկ բան, որ գուցէ նոյնքան ահաւոր նոյնքան անհաճոյ գիւղի համար, որ քան մութ գիշերներին սարերում ձորերում գալարուող ստուերները: Թող ամեն բան պարզ լինի, խորհրդաւոր գաղտնիքն ինչ պէտք է, մութից խաւարից միայն չար բան է ծնում: քանի քանի գիակներ են արիւնաշաղախ փոռել մութ ձորերում ուշ գիշերին. քանի ու բաներ են պատահել սրտերում թագնուած գաղտնիքներից:

Ասօն ինչ ունի, Արեգինը պէտք է իմանայ:

Ասօն լուռ է, մօրն էլ չի ասում իր դարդը, տէրտէրին էլ չի ասում, բայց պէտք է իմանալ, պէտք է որոնել, քրքրել, ծագումը պէտք է գտնել, մութ բանի վրայ մի ճրագ փառել, մի շող ցոլացնել: Երեկի մի պատճառ կայ, խօմ Ասօն չէր կարող հէնց այնպէս առանց պատճառի սեւասորել, լուել, քարանալ: Կամչար է պատահել, կամ վախեցել է, կամ ով գիտէ ինչէ: Թէ չէ ինչու է գիւղահարի պէս աչքերը չուած, մազերը խառնակ թափառում գաշտերում, վազում գետի հետ, հօտաղներին վախեցնում: Հարց ու փորձ արին, դէս ու դէն ընկան պառաւներն եկան գնացին նունուֆարի հետ փսփացին, գլուխներն օրօրեցին, աղջիկներն էլ իրար մէջ հազար ու մի պատմութիւններ սարքեցին, քչփչացին նրա նշանաձի նորքերի անդուին էլ մէջ լինիաւ:



Երկու անգամ նշանուած աղջիկ, ով դիտէ... բայց այդ բոլորից բան չը դուրս եկաւ:

Ա... դիւզը չիմացաւ Ասօի դարդը, նրա ստրի դաղտնիքը:

Բայց դիւզը դաղտնիք չի սիրում, նա դաղտնիքից վախենում է, նա մութ բանից դողում է, մի բան պէտք էր անել, մի բան պէտք էր հնարել, Սիրուն «քյ ու բուսաթով» տղամարդ է Ասօն, Արեգինի պարծանքն է, աչքն է, երբ յայտնում է, ողջ նրան են նայում, մօրը երանի տալիս, մատով իրար ցոյց տալիս, դէ երբ մի ամբողջ դիւզ աչքը տնկած մի հատ թիկունքի, մի հատ ճակատի, մի հատ երեսի նայի, դրանից բարի բան չի դուրս գայ: Աչքն ինչ ասես չի անի. Ասօին աչքով են տուել, Ասօն գժուել է:

Դիւզը հանգստացաւ, էլ դաղտնիք չը կար, այսպէս լու էր, ի՞նչ փոյթ՝ թէ Ասօն մնաց էլի թափառական, սդաւոր ու մուայլ, որ նա շարունակում է վաղվզել գետի ընթացքով մազերը քամուն տուած, բաւական է, որ այժմ դիւզը դիտէ դաղտնիքը, Ասօին աչքով են տուել, նա գժուել է: Գաղտնիքի վրայից խաւարը վերացաւ, բանը պարզ էր. աշկարայ, արեի պէս պայծառ:

Այսպէս լու էր:

Մի բան միայն մութ էր մնացել դիւզի համար, ոչ ոք չէր կարողանում բացատրել, թէ ինչո՞ւ Ասօն դաշտ դնալիս երբէք չի անցնում Շիրինենց փողոցով, որ ամենայարմար և ամենակտրուկ ճանապարհն է դիւզից դուրս դնալու: Ինչո՞ւ է ընտրում խոսքը ճանապարհներ: Առաջ խօմնա այդպէս չէր, նա էլ ողջ դիւզի պէս այդ փողոցվ էր անցնում, այժմ յանկարծ ինչ պատահեց:

Երկար մտածեցին, հազար ու մի ենթադրութիւններ արին, վերջ ի վերջոյ եկան այն եղրակացութեան, թէ այնտեղ՝ Շիրինենց փողոցի վրայ է բնակւում տիրացու Գրիգորը, հոչակաւոր գրքացը, նա որ շարերը կապել, կաշկանդել դիտէ: Դէ, Ասօին շարերը կապել, կաշկանդել են, որ այն կողմերից չ'անցնի, որ անցնի,

ով գիտէ, կարող է՝ փրկուել։ Հաւատացնում էին, որ եթէ Ասօն յանկարծ անցնի այդ փողոցով, տիրացուի զարմանալի սուրբ գրքերի թըլիսմը նրա վրայից չար աչքի զօրութիւնը կը հանի, բայց չարը կապել է, նա չի դնայ այն փողոցով, անպատճառ հեռուից կերթայ։ Զօրով էլ տանել չի կարելի, դա Աստծոն գուր չի գայ։ Այս մութքանն էլ պարզուեց. գիւղն իսպառ հանգստացաւ։ Կամաց-կամաց Ասօն իսպառ մոռացուեց, մարդիկ էլ նրանով չէին զբաղւում և արժէր միթէ. Ասօն մի խեղճ ու կրակ խենթ էր, կարծողներ կային նոյն իսկ, թէ գեերն էլ նրան խեղում են ամիսը մի երկու անգամ, թէ նա ընկնում, փրփրում է, և հէնց այդ գեերի համար է չուլերն ընկել, փախչում է նրանցից, որ ազատուի, բայց գեերը հետեւում են։

Ասօի փոյթը չէր ամենեին, թէ ի՞նչ է մոտածում իր մասին գիւղը, նա շարունակում էր իր թափառական կեանքը և մօր բոլոր հարց ու փորձերին տալիս էր խուսափական պատասխաններ։ Երբեմն նոյն իսկ կարծէր, որպէս զիջողութիւն մօր թախանձանկներին նա մի քանի օր իրար վրայ տանն էր մնում, գործի էր կենում, բայց յետոյ նորից թողնում էր ամեն բան և էլի թափառում, օրերով տուն չէր գալիս։

Կամաց-կամաց նա դաշտերի ինքնագլուխ պահապանը գարձաւ, մի երկու անգամ մոլորուած անասուններ բերեց տէրերին յանձնեց, այնպիսի լրջութեամբ և այնպիսի խրամներով ու խորհուրդներով, որ գիւղացիք զարմացած մնացին. խենթի գործ չէր։ Այդ քիչ է, երբ նա տեսնում էր դաշտում մէկի ձեռքով կատարուած հարեանի արտի զիանը, այնպէս էր զայրանում, կարծէք սեփական արտը տրորելիս լինէին։ Հօտաղները հեռուից նրան տեսնելիս աւելի զգոյշ էին պահում իրանց անասունները։ Բայց եթէ նա վրայ էր հասնում և մէկին բռնում էր յանցանքի մէջ, մօտենում էր լրջութեամբ, բռնում էր յանցաւորի ձեռքից, ցոյց էր տալիս իր կատարած

շարիքը, նայում էր աչքերի մէջ շեշտակի, ծակող հայ-  
եացքով և ասում:

—Սա վատ բան է, վատ բան, գէշ, գարշելի բան  
է. աէրն արիւնքրտինք է թափել, արիւնը սուրբ է,  
քրտինքը՝ թանկը Եւ այդ բանը նա ասում էր այնպիսի  
համոզիչ, ու ցաւոտ շեշտով, որ անկարելի էր նրա հետ  
չը համաձայնիլ, նրա բորբոքուած լայն բացուած աչքե-  
րի մէջ մի բան կար, որից ամենքը քաշւում էին, ոչ ոք  
չէր կամենում լսել նրա այդ յանդիմանութիւնը, ոչ ոք  
չէր կամենում նայել նրա այդ տարօրինակ աչքերի մէջ։

Ասօի համար գիւղացիք շարունակում էին ասել, թէ  
խենթ է, բայց իրանք էլ իրանց հոգու խորքերում անո-  
րոշ կերպով զգում էին, թէ նա սովորական խենթ չէ,  
մի անօրինակ, խորհրդաւոր բան ունի իր հայեացքի,  
խոսքերի, վարմունքի ամբողջ արտաքինի մէջ։ Ասօն դար-  
ձեալ սիրելի էր։

## IV

Լճակի ափով այն աղջիկը մենակ էր քայլում։ Մի-  
ջահասակ էր, հարուստ, լիքը մարմնով, մէկն այն գիւ-  
ղացի աղջիկներից, որոնք համարւում են գեղեցիկ իրանց  
կարմիր այտերի, կոլոր դէմքի, մեծ աչքերի, երկար  
մազերի համար։ Եւ այդ աղջիկը համարեա վազում էր  
առանց յետ նայելու, կարծես յետեն ընկած նրան հա-  
լածում էին։ Նա չէր ճշում, ձայն չէր հանում, բայց  
արտասում էր կամացուկ, մի վայրկեան կանդ էր առ-  
նում, աչքերը սրբում իր փէշով և կրկին շտապում։ Եւ  
ըեք ուրիշ աղջիկներ, երեխ ընկերուհիները նրան յե-  
տերց կանչում էին։

—Շաղեր, Շողեր։

Աղջիկը շարունակում էր գնալ։

—Շողեր մի գնա մենակ, յետ արի. էլ ոչինչ չենք  
ասի, արի։

Աղջիկը յետ չէր նայում. լալիս էր և շտապում։ Ընկերուհիները յուսահատուած յետ դարձան դիմեցին դէպի դաշտը, իսկ Շողերը շուտով ծածկուեց բրի յետեռում։

Նա բանջարաքաղի էր դուրս եկել ընկերուհիների հետ, դէ դնում էին, եկան, համոզեցին, տարան. մայրն էլ յորդորեց, որ գնայ, դուցէ դաշտում մի առ ժամանակ մոռանայ իր ցաւը սրտակիցների շրջանում։ Բայց հակառակը դուրս եկաւ. հազիւ դիւզից մի փոքր հեռացան, որ նրանք իրար հետ փսփսալ սկսեցին.

—Աղջի Շողեր, ինչ նիհարել ես. ասաց մէկը։

—Աղջի, ինչպէս դոյնդ ձգել ես, աւելացրեց միւսը։

Այդ էլ անտանելի էր, բայց էլի համբերեց, տարաւ. աշխատեց խօսքը փոխել, երբ մէկ էլ երրորդը մօտեցաւ ու կամացուկ հարցրեց.

—Եղջեր, նշանածդ ինչի՞ է քեզ թողնում, խեղճաղիկ, ախ էդ տղամարդիկ։

Սա արդէն չափազանց էր. բիրտ ձեռքով նրա ցաւոտ վէրքը շօշափեցին. Շողերն էլ պատասխան չը դաւաւ, կարմրեց, լեզուն կարկամեց, զլուխը քաշ ձգեց և միայն կարողացաւ ասել.

—Զեզ ի՞նչ... հեկեկաց, արցունքը թափուեց աշքերից և յետ դարձաւ։

Այժմ նա սդալով տուն է գնում անիծելով այն վայրկեանը, երբ համաձայնեց դուրս դալ, գնում էր առաջուայ պէս տանը փակուելու իր ցաւն ու կոկիծը հայրենի յարկի տակ թագցնելու համար։ Նա շրթունքները պինդ սղմել էր իրար վրայ, աչքերը դետին ձգել և քայլում էր անընդհատ առանց ուշք դարձնելու լճի, լեռների, դաշտերի վրայ, առանց լսելու բազմաթիւ ջըրային թռչունների ճիշն ու աղմուկը։ Իր փութկոտութեան մէջ ոտքի մաշիկի մէկը դուրս թռաւ, աղջիկը կուացաւ վերցրեց և կրկին շարունակեց գնալ շտապ շտապ, կարծես վախենալով թէ կը հասնեն և նոյն հարցը կը կրկնեն իր ականջին։

—Անողնը Աստուած, ինչ եմ արել քեզ, մրմիջում՝  
Յունուար, 1903.

Եին նրա շրթունքները, մէկն այնպէս եղաւ, ոև կապեցի, այս էլ... օծֆէ:

Լացը դադարել էր, նա այժմ մտածում էր: Քանի ժամանակ է չի տեսել Ասօին, ախ մէկ տեսնէր, մէկ երեսին նայէր, մէկ աչքերի մէջ նայէր, հարցնէր, թէ ինչո՞ւ այսպէս... ընկերուհիներն ասացին թէ Ասօն նրան թողնում է, թէ ուրիշին է սիրում, թէ նրա համար է սար ու ձոր ընկել, ինչո՞ւ...: Մի տարի առաջ Շողերն այս օրը երեսակայել անգամ չէր կարող, այն գժբաղդութիւնից, իր առաջին նշանածի մահից յետոյ էլի ամեն բան լաւ էր. ինչո՞ւ այժմ այսպէս, ինչո՞ւ... Ա՞ս այն օրերը, գիւղի աղջիկները ողջ Ասօի բաղդով էին զբաղուած, որքան յոյսեր կային, ախր ովզ նրան չէր ուզի. Գրքօի մահից յետոյ երբ լուր տարածուեց, թէ եղբօր նշանածը Ասօն պիտի առնի, ոչ ոք չէր ուզում հաւատալ, ամենքը նախանձից ճաքում էին, ահա այդ նախանձի թոյնն է, որ ամենքը, իր ընկերուհիները թափում են նրա գլխին: Ինչո՞ւ... ինչ է արել ինքը, ինչ մեղք ունի: Մէկ անգամ արդէն ջահիլ-ջահիլ սև կապեց, երեի Աստուած էր կամեցել, ինքն ինչ անէր, որ առաջին նշանածը մուրազին չը հասաւ: Ասում են, թէ Շողերն ուրախացաւ, որ Գրքօն սպանուեց, ասում են, որ նա առաջ էլ հէնց Ասօի վրայ է աչք ունեցել, ասում են հազար ու մի բաներ:

— Անողորմներ, անաստուածներ, ո՞ր քարասիրտը՝ կարող էր գեռ ուրախանալ, որ խեղճ Գրքօն այնպէս պատառ եղաւ. ինչ էք ուզում ինձանից, դու դատես Աստուած:

Աղջիկն ինքն իրան խօսում էր ու գնում: Նա այժմ մօտ էր թերակղզուն, որի վրայի հինաւուրց վանքի աւերակները արդէն ծրագրում էին իրանց մամուպատքարերով: Զը գնալ արդեօք այն քարերի մէջ, սուրբ տեղերում ուռած սիրտը գուրս թափել, աղօթել և լալ, պատմել ցաւերը Աստուն, մտածեց աղջիկը: Նա իր չորս կողմը նայեց, մարդ չը կար. ճանապարհը ծռեց և

դիմեց դէպի թերակղղին, դէպի աւելակները՝ Մի քիչ յետոյ նա կանդ առաւ. նրան թւաց, թէ հազի ձայն է լսում. ուշադրութեամբ նայեց չորս կողմը. ոչ ոք. Առաջցաւ և դարձեալ կանդ առաւ. այս անդամ նա իրօք նշմարեց մէկին լճի ափին, փլած պատի յետեռում, մի քարի վրայ նստած էր. աղջիկը նայեց և կամացուկ ձեռքը տարաւ դէպի կուրծքը, սիրտը բռնեց յուզմունքից... Ասօն էր այնտեղ...։ Առաջի վայրկենին աղջիկը կամեցաւ փախչել, և նոյն իսկ մի քանի քայլ ձգեց յետ, բայց կրկին ուշքի եկաւ յուզմունքից, կանգնեց, նորէն նայեց. Ասօն նստել էր, նայում էր լճին և չէր տեսնում, ապա ձեռք առաւ իր մեծ ձեռնափայտը և սկսեց մեղմիւ տաշել։ Աղջիկը կամացուկ մօտեցաւ յետերից, կանդ առաւ և նայում էր շնչակտուր։ Ասօն շարունակում էր տաշել դլուխը կախած, երբեմն-երբեմն ծանր հոգոց հանելով։ Շողերը նայում էր յափշտակուած, վազուց էր, որ չէր տեսել. Որքան գեղեցիկ էր, Տէր Աստուած, և որքան տիսուր միաժամանակ։ Մազերի մի փունջ աջ կողմից, գլխարկի տակից կախուել էր ճակատի վրայ. Ասօն սուզորութիւն ունէր միշտ յետ յետ տանել այն, բայց այժմ սիրուն փունջը կախուել էր և մոռացուել կարծես. Քանի, քանի անդամ Շողերն իրանց քազը սիրոյ ժամերին համբուրել է մազերի այդ ոլորը և իր ձեռքով յետ տարել ճակատից, փուել սիրուն գլխի վրայ կամ ցած բերել ծածկել նրանով աչքերը՝ նրան զուարձացնելու համար։ Ելի՞ նա էր, նոյն Ասօն նոյն թառլան Ասօն։ Նստած էր, որ կանգնէր յանկարծ՝ մի ծառ, թէ նայէր՝ մի Աստուած. միայն այժմ աչքերն էին թախծապատ, ճակատի վրայ՝ յօնքերի արանքում մի կնճիռ կար, իսկ միրուքը՝ սե սաթի պէս միրուքը՝ անօրինակ ձեռվ աճել էր, երկարել։ Շողերը նայեց՝ կուրծքը շարունակ յուզմունքից բռնած, այտերը բոցավառ, ապա թաթերի վրայ մօտեցաւ և քնքութեամբ փարեց նրա պարանոցով.

—Ասօն։

Աղջած երիտասարդը ցնցուեց, ոտքի ելաւ և մեղ-

մով յետ միշեց աղջկան՝ ոտքից գլուխ նայելով։ Աղջիկը կոտրուեց, գլուխը քաշ ձգեց ասես ամաչելով իր արածից և ոտքի ծայրով սկսեց փորել դետինը՝ աչքերը մի կէտի յառած։

—Աղօթելու եկայ, այս քարերը լիզելու, թրջելու իմ արցունքով, Ասօ, եկայ այս սրբի ոտքը ցաւերս Աստըծուն պատմելու, եկայ իմ սրտի կոկիծն այստեղ թաղելու, այնտեղ էի, ուրիշների հետ, տեսայ, որ էլ տեղ չունեմ, աշխարհում էլ տեղ չունեմ. ինչե՛ր ասացին, ախ որքան կ'ուզէի խուլ լինել, չը լսել, ինչեր են ասում իմ չորս կողմում. Ասօ, Ասօ, մեղք եմ ախր, ինչու այսպէս..., Երիտասարդը շարունակում էր լուռ նայել աղջկան։

—Նողեր, զուր եկար... և նա երեսը ծածկեց, աւելի մուայլ, աւելի գունատ ու տխուր, կարծես ամաչում էր նայել իր նշանածին, մի առ ժամանակ այնպէս մնաց, ապա կրկին նայեց։ Նստեց իր տեղում, քարի վրայ, բոնեց աղջկայ ձեռքը, նստացրեց իր կողքին։

—Որ եկար, գէհ նստիր։

Չեռքն իր ձեռքում պահած՝ քնքուշութեամբ նայում էր աղջկայ աչքերին, կարծես աշխատում էր որոշել նրա վշտի խորութիւնը։ Աղջիկը հնազանդ՝ լուռ նայում էր, կարծես սպասելով՝ ինչ է լինելու։

—Երէկ նստած էի մեր գետակի տփին, շարունակեց Ասօն, լուռ նայում էի ալիքներին, ինչպէս այժմ նայում եմ այս լճին։ յանկարծ դու էլ միտս ընկար, պատկերդ եկաւ, ուզեց առաջս կանգնել, ես էլ էի ուզում, որ մնայ, բայց չը մնաց, ես էլ չը կարողացայ պահել և նա ալիքների պէս, ալիքների հետ գնաց հեռացաւ։ Երկու չոր տերեւ ձգեցի ջուրը, միատեղ ձգեցի, նոյն տեղն ընկաւ, ջրի պտոյտը նրանց հետ խաղաց, խաղաց, նրանք առ ժամանակ իրար փարած՝ շրջաններ արին ջրերի վրայ, բայց մէկ էլ յանկարծ մի չար ալիք վրայ հասաւ հեռու տեղերից և նրանց առաւ իրարից բաժանեց։ Եւ գնացին այն տերեւները զանազան կողմիր, և ես լացեցի, լացեցի։ Դու լաց եղել ես, նողեր։

Աղջիկը հեկեկաց:

—Հա, դու էլ ես լոլիս, չը լինի թէ դու էլ ես  
տերեներ ձգել գետի երեսին, և նրանք փախել են զա-  
նազան կողմեր. խեղճ...

—Ես տերեներ չեմ ձգել, ես չոր տերել չեմ սի-  
րում:

—Դու տերեներ չես ձգել, այդ լու է: Այստեղ՝  
լճի ափի մացառներում անցեալները ես մի բոյն տեսայ,  
թռչնի բոյն, զայդ գեղձանիկներ իրանց լալկան ճթճթռ-  
ցով նստում էին այնտեղ և գուրգուրուում, այնպէս լաւ  
էր: Ես աղօթում էի նրանց համար, ես ուզում էի, որ  
նրանք միշտ այնտեղ մնան, մնան, ես էլ նայեմ, ինչ  
շատ բան է, միայն նայեմ: դու խօմ սիրում ես նայել  
թռչուններին, թիթեռներին, դաշտերին, սարերին: Ես  
էլ նայում էի իմ թռչուններին. աշխարհի մէջ շատ ան-  
դամ մեր բաղդի համար նայելն էլ մեծ բան է: Այսօր  
էլ եկայ՝ բունն աւերուած, մացառը ջարդուած գտայ,  
թռչնիկներից մէկը չը կար, միւսը վիրաւոր ու տիսուր  
կծկուել էր մի ճիւղի վրայ, և նրա շուրջը մանրիկ փե-  
տուրներ, որ քամին առնում, ցրում էր լճի երեսին, և  
ալիքները տանում էին հեռո՛ւ, հեռո՛ւ ափերից: Սգաւոր  
թռչնիկն ինձ նայեց, ապա թափ առաւ թռաւ, երեկ  
անիծելով այս տեղերը, ուր այնքան ցաւ տեսաւ. ես մե-  
ղաւոր չէի, բայց ինձանից փախաւ: Ի՞նչ կարող էի անել,  
նայեցի աւերակ բնին, նայեցի փետուրներին և լացեցի,  
լացեցի: Դու թռչնի բոյն քանդել ես, նողեր:

—Զէ, չէ, Ասօ, ես բոյն չեմ քանդել, ուրիշ՝ քան-  
դեց իմ հիւսած բոյնը, քանդեց անողորմ կերպով և իմ  
խղճուկ փետուրները քամուն տուաւ աշխարհի չորս  
կողմերում, ինձ թողնելով բնաւեր ու սգաւոր: Թող, թող  
որ ես լամ իմ բունն ու փետուրները. Ասօ, ինչու այս-  
պէս, ինչ է պատահել, օծֆ, բութ դանակով ես մորթռում  
ինձ. ինչ եմ արել քեզ, Աստծուն, աշխար... նրա ձայնը  
խղուեց. հեկեկոց խեղդեց կոկորդը, և արցունքը թա-  
փուեց վերլստին:

—Հա, իրաւունք ունիս, լաց, լաց դու ոչ ոքի բուն  
շես քանդել, բայց քնը քանդեցին և փետուրներդ քա-  
մուն տուին, երեկ գիշեր ես էի այնտեղ էի, գետի  
ափերում. ես սիրում եմ փախչող ալիքների ձայնը,  
նրանք էլ ինձ պէս կ'ասես իրանց ցաւիցն են փախ-  
չում, որ ազատուեն. Հեռու ձորից, այ էն սարից էն  
կողմը մի երգ էր լսում.

«Ես լեռներում, ճանապարհից քիչ հեռու,  
«Մի եղջերու մրմնջում է, հառաջում  
«Ծանր ցաւից, մի վիրաւոր եղջերու  
«Ես լեռներում, ճանապարհից քիչ հեռու»

—Գիտես, Շաղեր, երգը ճշմարիա էր ասում. նետը  
դիպաւ մի օր խեղճ ու կրակ եղջերուին, նա վիրաւոր  
ու արինաքամ սարերըն ընկաւ իր ցաւից, փախաւ՝ որ  
ազատուի մահարեր նետից, բայց խեղճը չը գիտէր, թէ  
նետը ամեն տեղ ման է ածում վէրքի մէջ և ճար ու  
փրկութիւն չ'ունի, հեծեծում է, լալիս է լեռների, ձո-  
րերի միայնութեան մէջ, և քարերը տնքում են նրա  
ցաւից: Երբ երդը լոեց, ես էլ լացեցի եղջերուի հա-  
մար. աշխարհում կայ մէկը, որ ինձ համար լաց լինի,  
Շաղեր:

—Ախր ինչ ունիս, Ասօ', մատադ, ինչու ես այսպէս  
խօսում:

—Դարդ ունիմ, Շաղեր, դարդ՝ ծովի չափ, թող  
ինձ իմ դարդով, տնըն դարձիր շուտով և էլ ամենենին  
մի արի. այծեամի պէս մենակ կը թափառեմ ձորե-  
րումև նրա արեան կաթիլների պէս ցաւս կը փռեմամեն  
տեղը Գնա, գնա Շողեր, քամու բերածը քամին կը  
տանի:

Աղջիկը ձեռքերը մեկնեց, փաթաթուեց նրա պա-  
րանոցով և ճակատը սղմեց նրա դէմքին:

—Ասօ ջան, մի ասա այդ, մէր սիրոյ համար, ես  
էլ կը գամքեղ հետ, սար ու ձոր ընկած քայլ առ քայլ  
կը վաղեմ քո յետեից. թէ սարում մնաս, կողքդ կը  
նստեմ, թէ քարում պառկես, վրագ կը հսկեմ, թէ ար-

ցունք թափես, թնդ որ ես սրբեմ, Ասօ ջան, մեր սիրոյ համար...

— Սէրը, Շնդեր... խեղճ աղջիկ, երբ ծառի վրայ թռչունի բոյնն աւերես, նա էլ երբէք այստեղ չի գայ բոյն դնելու։ Եւ Ասօն մեղմով հեռացրեց աղջկայ ձեռքերը, մի փոքր յետ քաշուեց և ձեռնափայտը տաշել սկսեց։

— Ասում են Ասօն խենթ է, չար աչք է դիպել, չէ, դու խենթ չես, դու մոռանում, դու թողնում ես ինձ, դու անսիրտ ես։ Թնդ այդպէս լինի. Հին սեր կը գտնեմ, նորից դլխիս կը ձգեմ, եղբօրդ գերեզմանի վրայ կերպամ կը կծկուեմ, կը պատմեմ, կը պատմեմ իմ ու օրը։

— Գերեզման ես ուզում, հեռու մի գնա, Շնդեր, իմ սրտում այժմ մի գերեզման կայ խոր ու սկ. տես, ես տաշում եմ, տաշում անընդհատ, դագաղ եմ շինում՝ նրա մէջ մի կեանք թաղելու համար։ Թնդ ինձ, Շնդեր, տերևները շատ պտոյտ եկան ջրերի վրայ, չար ալիքն եկաւ հասաւ, ժամանակ է բաժանուելու, թնդ գնան այժմ իւրաքանչյւրն իր ճանապարհով։ Խնչ կարող ենք անել, կեանքի ծովը լայն է, ալիքները բազմապիսի բաղդ...

— Դու ինձ էլ չես սիրում...

— Չէ, չէ, Շնդեր, օօֆ... պատասխանեց Ասօն սրտնեղութեամբ, վերցրեց ձեռնափայտը, ոտքի կանգնեց և առանց յետ նայելու հեռացաւ, գնաց։ Աղջիկը նայում էր նրա յետեից, ապա մի բան միմնջաց, գոգնոցով աչքերը սրբեց և դառնալով նայում էր լճին։ Դարձեալ բադերն օրուում էին ջրերի վրայ, դարձեալ հաւալուսները լողում էին արեի շողերով ողողուած, ամեն բան գեղեցիկ էր շրջակաքրում, բայց աղջիկը նստած, կամ աւելի ճիշտ՝ ընկած էր ջարդուած, նայում էր, բայց ոչինչ չէր տեսնում։ Աղօթքի մասին էլ չէր մտածում, ինչու աղօթել, ում աղօթել։ Նա դլուխը բռնեց ձեռքերի մէջ. ուր գնալ այժմ։ տունը դադարի է, ցուրտ, ընկերուհիներն անսիրտ, նախանձոտ, մայրը

շարունակ վշշում է և սրբերի դուռը գնում. ուր գնալ,  
ուր փախչել, ուր թագնուել. Ալիքները դալիս՝ մեղմով  
զարկում էին ափերին թեթև ճղփիւնով, նրանց ցայտում  
ները թրջում էին նողերի ոտները, և նա շարունա-  
կում էր մնալ միանոյն տեղում:

Աւերակներին նայեց, մնալ ու սպաւոր հինաւուրց  
քարերն իր սրտի պէս ու, իր սրտի պէս վշտահար  
կանգնել էին յրերի ափին, նայում էին ալիքների մէջ և  
կարծես լալիս էին նրանց ծոցում իրանց դարաւոր ցա-  
ւը: Ամեն բան այստեղ համապատասխանում էր նողերի  
սրտին, ամեն քար ասես նրա հետ լալիս էր: Այս աւե-  
րակները, այս կիսափուլ պատերը, այս խոնարհած կա-  
մարները ամենքը միասին ասես մի մեծ սիրտ լինէին  
նոյնպէս ու, նոյնպէս քանդուած, որպէս նողերի սիրտն  
էր: Եւ նա կուզէր երկար, թէկուզ յաւիտեան մնալ  
այստեղ, այս ծփծփան ալիքների մօտ, որոնք դալիս,  
զարկում էին աւերակների ոտքին և կարծես փափսում  
էին նրանց հետ այս խուլ միայնութեան մէջ, ուր վրշ-  
տահարը կարող է խօսել իր սրտի հետ, ինչպէս մի  
ուրիշ անձի հետ, ուր արցունքը վկայ չունի, ուր վէր-  
քը մղկտում, մումուռմ է աշխարհից հեռու:

Աղջիկը շարունակում էր մնալ մի և նոյն տեղում  
նստած, ծնկները բազուկների մէջ և գլուխն օրօրում էր  
մեղմով: Զոյդ հաւալումները լոզում էին փառահեղօրէն  
արեւի շողերի տակ ոսկեզօծ, կարծես լին տէրերը  
լինէին:

—Երանի՛ ձեզ, անգարդ հաւքեր, երկիրը ձերն  
է, երկինքը ձերն է, թէ չար աչք համնի ձեզ յրերի  
վրայ, անէծքով կը փախչէք դէպի վերերը. ախ, թէ ես  
էլ ձեզ պէս թեւեր ունենայի, ձեզ հետ տարուէի յրե-  
րի երեսին կամ ձեզ հետ միասին երկնքում ճախրէի:

Հեռու, դէպի հիւսիս, ափերը քերելով լճի վրայ  
օրօրուում էր մի փաքրիկ ձկնորսական նաւակ՝ բաց  
արած սպիտակ առագաստը, որ այնպէս նմանում էր  
ծիծեռնակի զոյդ թեւերին: Նողերն այն չէր տեսնում

և նաւակը կամաց կամաց գալիս էր դէպի թերակզբին։  
 Հովը փշում էր հեռու ձորերից և Շողերի ականջին  
 հասցնում մի ուրախ երգի ձայն։ Ընկերուհիներն էին,  
 որոնք երգում էին և բանջար քաղում։ Նրանք երգում  
 էին մատաղ սրտի յոյզերը, երգում էին սէր ու ինդու-  
 թիւն, վարդ ու գարուն, ծաղկազարդ ձորեր ու սա-  
 րեր։ Ծանօթ էր երգը, ինքը Շողերը քանի անդամ նոյն  
 տեղերում նրանց հետ երգել է, նրանց հետ ցնծացել,  
 իսկ այժմ...

—Երջանիկներ, մրմնջաց նա.

Երգի ձայնը մօտեցաւ, երեխ ընկերուհիները գալիս  
 էին, նա վեր կացաւ, որ հեռանայ նրանց չը հանդիպելու  
 համար։ Ծանօթ էր մի անդամ ևս տեսնել երջանկու-  
 թեամբ փայլող այն դէմքերը։

Շողերը հազիւ մի քանի քայլ էր ձգել, երբ իր յե-  
 տեից լսեց մի ձայն.

—Շողեր։

Աղջկը յետ նայեց վախեցած... Ավի մօտ կանգ-  
 նած էր փոքրիկ ձկնորսական նաւակը, և նրա մէջ նըս-  
 տած էր իր հայրը, ձկնորս նավօն, որ դուրս էր եկել  
 լճի զանազան մասերում դրած ձկնորսական կողովներն  
 այցելելու և այժմ յետ էր գնում տուն։ Նա մի առոյգ,  
 յաղթանդամ ծերունի էր, մանրիկ, եռանդուն աչքերով,  
 որոնց տեսողութիւնն այնպէս սրուել էր՝ տարիների ըն-  
 թագքում լայնարձակ լճի վրա հեռաւոր հորիզոնները և  
 երկինքը դիտելուց նավօն ոտաբորիկ էր, վարտիկը ծա-  
 լած մինչև ծնկները, ջլուտ բաղուկները նոյնպէս մերկ  
 էին մինչև արմունկները։ Նա հագին ունէր մի հին ար-  
 խալուզ ու մի կարճ մազէ աբայ, իսկ գլուխը կապած  
 էր թաշկինակով գլխարկի տեղ։ Արեից այրուած ու  
 թխացած մորթին ոտների ու ձեռների վրայ պատած էր  
 թաւ մազերով։ Հաստ ու ճերմակ բեխերի տակ նրա  
 շրթունքներն իսպառ ծածկուել էին, իսկ դուրս ցցուած  
 այտերը և ծնօտը ուժեղ վկայում էին մի կոշտ ու բիրտ  
 բնաւորութիւն, որ մշակուել ու կազմակերպուել է ազատ

բնութեան ծոցում, տարելքի հետ մղած կոխների մէջ։ Ամբողջ Ա... գիւղում նա յայտնի էր որպէս սրտոտ, անվախ, նոյն իսկ անողորմ մարդ, տում էին, որ նա երբ բէք լաց չէ եղել և արցունքն ատելով ատում է. հաւատացած էին նոյնպէս, որ նա զարհուրելի կերպով վըրէժինդիր լինել գիտէ։ Ահա այս մարդն էր կանգնած նաւակի մէջ՝ թիակին յենուած իր հասակի բոլոր բարձրութեամբ. նաւակը տարօւբերուում էր նրա ոտների տակ, միջդեռ նավօն ըստ երեսյթին զարմացած՝ շարունակում էր նայել աղջկան։ Հանդիպումն անսպասելի էր և՛ մէկի, և՛ միւսի համար. Եողերը շփոթուեց, մի վայրկեան կանդ առաւ քարացած, սաստիկ գունատուեց, ապա գլուխը քաշ ձգեց ու մնաց յանցանքի մէջ բըռնուածի պէս։

—Եողեր, ինչ ես անում այստեղ մենակ, կրկնեց հայրը ափը ցատկելով և գէպի աղջիկն առաջանալով։

—Ես... ես, ոչինչ, հայրիկ, բանջար քաղելու էի եկել... յետոյ չը քաղեցի, տուն եմ գնում...»

—Տնն ես գնում, ինչո՞ւ չը քաղեցիր, լաւ եղանակ է. մենակ ես։

—Զէ, հայրիկ, ընկերներս այն կողմը գնացին, ես չը հասայ, տուն եմ գնում։

—Բայց մենակ այստեղ, ճանապարհից հեռու, Եռղեր ջան, լաւ չէ ախր։

—Ես գիտէի, որ դու այս տեղերը կը լինես, սպասեցի չեկար, ես էլ գնում էի։

Աղջիկը ստում էր, բայց ոչ յաջող, որովհետեւ խօսակցութեան բոլոր ժամանակ նրա ձայնը կերկերում էր, գէմքն՝ սկզբում գունատ ներքին յուղմունքից, այժմ կարմրեց, ճակատը քրտնեց, այտերը վարդ դարձան։ Հայրը նայում էր ուշադրութեամբ, նա կարծես զգում էր, որ աղջիկը խաբում է։ Մի առ ժամանակ գէմ առ գէմ կանգնած՝ նրանք լուռ մնացին։

—Արի, Եողեր, արի, նստիր նաւակը, ասաց վերջապէս հայրը. այսպէս աւելի շուտ կը համենք։

Շողերը մօտեցաւ գլխակոր, ցած իջաւ նաւակի մէջ, հայրը բացաւ սպիտակ առագաստը, և նրանք սըշ լացան ջրերի վրայից գէպի գիւղ, որ հեռու լեռնալանջի վրայ երեւում էր իր տափարակ տներով, որոնք այնպէս նմանում էին արևկող արած քարաթոթոչների։ Խրճիթներից ծխի պտոյար ոլոր մոլոր բարձրանում էր և լեռների վրայ վաղանցուկ մնաթ ամպեր կազմում. գիւղից վեր՝ կանաչ լեռնալանջի վրայ երեւում էին մեծ ու փոքր անառուներ, իսկ վարում, գէպի դաշտերը գնացող մեծ ճառ նապարհի վրայ երկու եղներ քաշում էին կանաչ խոտով բարձած մի սայլ։ Այս բոլորը գեղեցիկ էր, ինչպէս և կապուտակ լիճը, և բոլորը ողողուած էին գարնանային արեկի պայծառ շողերով, բայց և սրանցից ոչ մէկը չէր դրաւում Շողերին, ոչ մէկի վրայ նրա վշտոտ հայեացքը չէր հանգստանում։ Նա գիտէր, որ հայրն իրան է նայում և գլուխը քաշ ձգած՝ աչքերը չէր հեռացնում ջրերից, որոնք կոհակներ կազմելով փախչում էին նաւակի տակից։ Շողերն այնքան տիսուր էր, նա այժմ դարձեալ այնպէս գտնաստ էր։

—Գիտես, Շողեր ջան, կողովները մէկիկ-մէկիկ նայեցի, յոյս ունիմ առատ ձուկ հանել. կղզու շուրջը անթիւ են։

Աղջիկը դարձեալ լուռ էր, հայրը նայեց խոռվուած ու շեշտակի։

—Շողեր։

Աղջիկը գլուխը չը բարձրացրեց և յանկարծ բարձրածայն հեկեկաց, յորդ արցունկները թափուեցին, և նա գլուխը թաղեց հօր կրծքում։ Նավօն այս անդամ սաստիկ շփոթուեց, ինչ անելը չիմանալով՝ գրկեց զաւակի սիրուն գլուխը, ջերմութեամբ սեղմեց կրծքին ու մնաց կարկամուած, վշտոտ հայեացքը նաւակի մի կէտին յառած։ Աղջիկը շարունակում էր հեկեկալ. հայրը յուզմունքից խեղդուած՝ աշխատում էր ցոյց չը տալ իր թուլութիւնը, լուռ էին, առանց խօսքերի հասկանում էին իրար. Շողերը երբէք հօրը չէր գանգատուել իր բախ-

տից, ոչ առաջին նշանածի մահից յետոյ և ոչ երկրորդի՝ Ասօի այս անօրինակ վարժունքից յետոյ. բայց հայրը միշտ կարդացել էր նրա դէմքի թափիծը, զգացել էր նրա խորը վիշտը և թագցրել էր իր յուզմունքը։ Անգամ կինը՝ Գիւղնազը նրա ծնողական թուլութեանը ականատես չէր եղել երբեք։ Այժմ առաջին անգամն էր, որ հայրը տեսաւ աղջկայ արցունքը, առաջին անգամ զգաց, որ իր սիրտն էլ փշուր փշուր է եղել և էլ չը դիմացաւ. — ձեր, խստասիրտ Նավօն հեկեկաց երեխայի պէս:

— Ի՞նչ անեմ, զաւակս, որ ջուրն ընկնեմ, Աստծու կամեցածի դէմ մենք հողեղիններս ի՞նչ կարող ենք անել։

Շողերը շարունակում էր հեկեկալ, հօր ծեր աշքերից քամւում էին արցունքները, նաւակը պատուում էր ջուրը, և սգաւոր զոյդը տարւում էր ալիքների վրայով։ Կապուտակ լիճը մեղմ ծփանքներով ժպտում էր, հորիզոնը եղելող կանաչապատ ու ծաղկաւէտ լեռները կարծես ծիծաղում էին վծիտ կոհակներին նայելիս, երկինքը ջինջ էր ու ժպտուն, միայն հայրն ու աղջիկն էին սգաւոր, որոնք տարւում էին նաւակի մէջ խառնելով արցունքները կապոյտ ջրերին։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Կը շարունակուի)